**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

## 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 16 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 18-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային պայմանագրում (Գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր (լրացուցիչ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Պայմանագրի նպատակն է 2007 թվականի նոյեմբերի 15-ին Գյուղական ճանապարհների հատվածի ծրագրի իրականացման համար կնքված պայմանագրով նախատեսված ծրագրի իրականացման գերածախսի ֆինանսական լրացուցիչ վարկ ստանալը:

2. Պայմանագրով Ասիական զարգացման բանկը Հայաստանի Հանրապետությանն է տրամադրում տասնմեկ միլիոն երկու հարյուր մեկ հազար Փոխառության հատուկ իրավունքներին (ՓՀԻ 11.201.000) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով, 2007 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր» վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման գերածախսի ֆինանսավորման նպատակով:

Պայմանագրի բաղկացուցիչ մասն են կազմում երկու հավելվածներ՝ «Ամորտիզացիոն ժամանակացույց» ու «Վարկային միջոցների բաշխում եւ մասհանում» վերտառություններով:

3. Վարկային պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) Ասիական զարգացման բանկին վարկային տոկոսներ վճարել տարեկան մեկ (1%) տոկոս տոկոսադրույքով վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում, եւ տարեկան մեկ եւ կես տոկոս (1.5%), որը ենթակա է հաշվարկման Վարկային հաշվից ստացված եւ Վարկի տարբեր ժամանակահատվածներում չմարված գումարների նկատմամբ.

բ) Վարկի տոկոսները եւ ցանկացած այլ վճարումները կատարել կիսամյակը մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին եւ օգոստոսի 1-ին.

գ) Վարկային հաշվից ստացված Վարկի հիմնական գումարը վճարել Վարկային պայմանագրի Հավելված 1-ում սահմանված ամորտիզացիոն ժամանակացույցի համաձայն.

դ) Վարկի հիմնական գումարի եւ տոկոսների վճարումը կատարել ԱՄՆ դոլարով՝ ըստ Վարկային կանոնակարգի 4.03 Բաժնի (ա) կետի եւ 4.04 Բաժնի.

ե) ապահովել վարկային միջոցների ուղղումը Ծրագրային ծախսերի ֆինանսավորմանը.

զ) կատարել պահանջվող ծախսերի 13.7 %-ի համաֆինանսավորում.

է) վճարել ՀՀ տարածքում գանձվող հարկերն ու մաքսավճարները:

4. Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունը համահունչ է արտաքին քաղաքականության բնագավառում բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ՝ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի նոյեմբերի 18-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային պայմանագրում (Գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր (լրացուցիչ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 դեկտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ- 785